

ՏԵՂԱՅԻՆ ԱՆՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2016թ. հունվարի 19-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի բնակչության պարենային ապահովության, խոցելիության և սնուցման ամբողջական գնահատում (ՊԱԽՍԱԳ) 2015թ. (2014թ. հավաքագրված տվյալների հիման վրա)» խորագրով ներածական հանդիպմանը,
- ✓ 2016թ. հունվարի 19-ին ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ա. Առուշանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի բնակչության պարենային ապահովության, խոցելիության և սնուցման ամբողջական գնահատում» խորագրով համատեղ նիստին,
- ✓ 2016թ. հունվարի 27-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի բնակչության պարենային ապահովության, խոցելիության և սնուցման ամբողջական գնահատում (ՊԱԽՍԱԳ) 2015թ. (2014թ. հավաքագրված տվյալների հիման վրա)» խորագրով հանդիպման նախնական արդյունքների քննարկմանը,
- ✓ 2016թ. փետրվարի 4-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի «Ասիայի և Խաղաղ-օվկիանոսային տարածաշրջանում քաղաքացիական կացության ակտերի գրանցման և բնակչության բնական շարժի վիճակագրության վերաբերյալ տարածաշրջանային գործողություններ հիմքով» Ազգային ծրագիրն իրագործելու հետ կապված աշխատանքները համակարգելու համար ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2016թ. փետրվարի 10-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) ծրագրի բացման արարողությանը,
- ✓ 2016թ. փետրվարի 18-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Նպաստավոր գործարար միջավայր կայուն ձեռնարկությունների համար» խորագրով կոնֆերանսին,

- ✓ 2016թ. փետրվարի 19-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում ծխախոտի հարկային բարեփոխում» խորագրով կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2016թ. փետրվարի 22-23-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՄ-ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ երեխայի իրավունքների գործիքակազմի շնորհանդեսին և երեխայի իրավունքները զարգացման համագործակցության մեջ ընդգրկելու վերաբերյալ փորձագիտական դասընթացին,
- ✓ 2016թ. փետրվարի 23-ին ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՓՄՁ քաղաքականության ինդեքս. Արևելյան գործընկեր երկրներ 2016թ.» զեկույցի պաշտոնական շնորհանդեսին,
- ✓ 2016թ. փետրվարի 24-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «Կանխատեսում» ուղղությամբ ագրո-արդյունաբերական համալիրի գծով Խորհրդատվական կոմիտեի աշխատանքային խմբի նիստին,
- ✓ 2015թ. փետրվարի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Արտակարգ իրավիճակների ժամանակ ռիսկերի գնահատման տեխնիկական խմբի աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. փետրվարի 25-ին ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի ֆինանսների վիճակագրության ենթակոմիտեի նիստին,
- ✓ 2016թ. փետրվարի 26-ին ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ն. Եղիգարյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած Ազատ հասանելի վիճակագրական ցուցանիշների քննարկմանը: